# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
## իրավերում փոփոխություններ կատարելու մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի 2026 թվականի օգոստոսի 07-ի թիվ 1.1 արձանագրությամբ և հրապարակվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը՝ **ԵՄ-ԷԱՃԱՊՁԲ-26/90**

«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի կարիքների համար օդորակիչների ձեռքբերման նպատակով կազմակերպված ԵՄ-ԷԱՃԱՊՁԲ-26/90 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով իրավերում կատարված փոփոխության պատճառները և կատարված փոփոխությունների համառոտ նկարագրությունը՝

**Փոփոխության առաջացման պատճառ N 1:** Էլեկտրոնային աճուրդի համակարգի միջոցով գեներացված հրավերի տեքստով ներկայացված տեխնիկական բնութագրում 1-ին չափաբաժնի մասով անհրաժեշտություն է առաջացել կատարել փոփոխություն:

**Փոփոխության նկարագրություն:** 1-ին չափաբաժնի տեխնիկական բնութագիրը շարադրվել է նոր խմբագրությամբ՝ հետևյալ կերպ.

«Օդորակիչ 18000 BTU, հիմնական ռեժիմները՝ տաքացում և սառեցում, հզորությունը սառեցման ռեժիմում՝ 18000 BTU, ծախսը սառեցման ռեժիմում՝ 1600 Վտ/ժ (թույլատրվող շեղումը +- 10%), ծախսը ջեռուցման ռեժիմում՝ 1500 Վտ/ժ (թույլատրվող շեղումը +- 10%), աշխատանքային մակերեսը՝ 60մ2, աշխատանքային ջերմաստիճանը մինչև (-7 C), ներքին բլոկի չափերը՝ 95x31x21 սմ (թույլատրվող շեղումը +- 10%): Օդորակիչները պետք է լինեն Midea, Hisense կամ Zanussi ֆիրմայի, երաշխիքը 1 տարի: Ապրանքը պետք է լինի նոր և չօգտագործված, իսկ տեղափոխումը և տեղադրումը իրականացնում է մատակարարը (անհրաժեշտության դեպքում ավտոկռունկի օգտագործմամբ):»

**Փոփոխության հիմնավորում:** «Գնումների մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Հովհաննիսյանին:

Հեռախոս՝ +37498389689 (ներքին հեռախոսահամար՝ 13)
Էլ. Փոստ՝ a.hovhannisyan@promotion.am
Պատվիրատու՝ «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ